# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**02.06.2026թ.**

## «ՄԵՏԱԼ ԳՌՈՒՊ» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ վարչ. շրջան,
Արտաշիսյան պող., 94/10 շենք, 0086
Հեռ՝ (+374 10) 744503
էլ. փոստ՝ info@metalgroup.am
Ինտերնետային կայք՝ www.metalgroup.am

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻԱԿ ՄԱՍՆԱԿՑԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**«ՄԵՏԱԼ ԳՌՈՒՊ»**

**Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միակ մասնակցի**
**որոշում թիվ 2026-06-02**

(Կազմված է «2» հունիսի 2026թ. և բաղկացած է 1 (մեկ) թերթից)

ք. Երևան «2» հունիսի 2026թ.

Ես՝ «Մետալ Գռուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (գրանցման համար՝ 290.110.873405, գրանցված՝ 29.09.2015թ., ՀՎՀՀ՝ 01268239, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ 0086, Արտաշիսյան պ. 94/10) (այսուհետ՝ Ընկերություն) միակ մասնակից Ռաֆայել Նորիկի Հակոբջանյանս (նույն. քարտ՝ 020177937, տրված՝ 02.02.2026թ., 057-ի կողմից, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 0054, Սամվել Գևորգյան 94/4) (այսուհետ նաև՝ Միակ մասնակից),

հիմք ընդունելով Ընկերության 2025 թվականի գործունեության արդյունքները, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ 31.12.2025թ. դրությամբ Ընկերության կուտակված (նաև նախորդ տարիներին կուտակված) զուտ շահույթը կազմել է ընդհանուր 3,681,608,000 (երեք միլիարդ վեց հարյուր ութսունմեկ միլիոն վեց հարյուր ութ հազար) ՀՀ դրամ,

ղեկավարվելով Ընկերության կանոնադրությամբ և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետերով, ինչպես նաև 42-րդ հոդվածով՝ **միանձնյա**

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Ընկերության կուտակված ամբողջ շահույթը, այն է՝ *3,681,608,000 (երեք միլիարդ վեց հարյուր ութսունմեկ միլիոն վեց հարյուր ութ հազար) ՀՀ դրամը*, բաշխել Ընկերության միակ մասնակից Ռաֆայել Նորիկի Հակոբջանյանին՝ սահմանելով, որ նշված գումարից ՀՀ օրենսդրությամբ նախատեսված 5% (հինգ տոկոսի) չափով եկամտային հարկի գումարը, որը կազմում է *184,080,400 (մեկ հարյուր ութսունչորս միլիոն ութսուն հազար չորս հարյուր) ՀՀ դրամ,* Ընկերությունը՝ որպես Միակ մասնակցի հարկային գործակալ, պետք է պահի և փոխանցի ՀՀ պետական բյուջե:
2. Սահմանել, որ վերոնշյալ շահույթի բաշխումը տեղի է ունենալու փուլերով, 2026թ. հունիսի 2-ից մինչև 31.12.2026թ.-ը ներառյալ՝ բանկային փոխանցումներով:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Ընկերության ֆինանսական տնօրեն Արտակ Հակոբյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Ընկերության միակ մասնակից

__________________ Ռաֆայել Նորիկի Հակոբջանյան